



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՆՈՐԱԿԵՐՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաշվետվությունը ընդգրկում է 10.01.2010թ. մինչև 06.02.2012թ. ընկած ժամանակահատվածը:

Վերը նշված ժամանակահատվածում, որպեսզի համայնքը ընդգրկվի պետության կողմից տրվելիք 1:2 հարաբերությամբ ցորենի էլիտար սերմացուի ցանկում, սեղմ ժամկետում կազմակերպվեց և համայնքի բնակիչներին ցուցակագրվեց և ժամանակին և էլիտար և առաջին վերարտադրության ցորենի սերմով ապահովվեցին գյուղացիական տնտեսությունները: Համայնքապետարանի բյուջեից 250000դրամ ներդրում է կատարվել նախագծանախահաշվային աշխատանքների համար: Վորլդ Վիժն կազմակերպության կողմից կատարվել է համապատասխան ներդրում 520մ խմելու ջրագծի արտաքին ցանցը վերանորոգելու համար, որը ընթացքի մեջ է:

Պետական բյուջեի միջոցով, ընթացքի մեջ է խմելու ջրագծի արտաքին ցանցի 2կմ վերանորոգման աշխատանքները:

Համայնքի բյուջեից ներդրում է կատարվել 400000դ-ի չափով Նորակերտի միջնակարգ դպրոցում մեկ դասարան նախակրթարան բացելու համար:

2011թ համայնքի բյուջեի պլանային ցուցանիշը տարեկան 20667,0 հազ. դրամի դիմաց տարվա նկատմամբ կատարվել 98.1 %, կամ գումարային արտահայտությամբ 20598,8 հազ. դրամ: Պլանային 20667,0 հազ. դրամում սեփական եկամուտների պլանային ցուցանիշը կազմում է 11363,9 հազ. դրամ, այսինքն սեփական եկամուտներից համայնքի բյուջե է մուտքագրվել 10987,9 հազ. դրամ, այն տարվա պլանի նկատմամբ կազմում է

96.7 : Հողի հարկի գծով 5428.9,0 հազ. դրամի դիմաց գանձվել է 4803.1,0 հազ. դրամ,կամ 88,5% , գույքահարկի 425 հազ. դրամի դիմաց գանձվել է 704,2 հազ. դրամ կամ 165,7 % : Հողի վարձավճարի տարեկան պլանը կազմում է 5500 հազ. դրամ, որի դիմաց գանձվել է 5445,7 հազ. դրամ կամ 99 % :

Նախորդ տարիների աշխատավարձի պարտքից մարվել է 8757,9,0 հազ. դրամ, իսկ սոց վճարի պարտքից 958,6 հազ. դրամ, ընդամենը 9416.5,0 հազ. դրամ:

Նորակերտ համայնքի աշխատակազմը կօգտագործի իր մտավոր կարողությունը համայնքի բնակիչների սոցիալ տնտեսական վիճակը բարելավելու համար:

Նորակերտ համայնքի ղեկավար՝

Գ.Սարգսյան